երջանիկ խաղաղութեամբ 'ի երկիր և 'ի յերկինս, ես ոչ երկբայիմ զի զերծեալ ոչ ոք գտանի 'ի յերեսս երկրի որ 'ի ժամանակս կենաց իւրոյ ոչ իցէ հանդիպեալ ընդ իւր զանազան փոխարկմունս մէջ բնութեան իւրոյ 'ի մանկութենէ մինչև 'ի ծերութեան որ ոչ իցէ ատեցեալ սիրելին իւր, դարշեցեալ 'ի ցանկութենէ իւրմէ, զղջացեալ ի արարմանց իւրոց, փոշմանեալ 'ի սղալմանէ իւրմէ և այլն, որպէս ես 'ի միտս քոյ ձգօղս, և դու 'ի միտս քոյ առնօղդ ընթերցօղդ, ուրեմն զինչ արարից այսպիսի գազանաբարոյ բնութեան մերոյ որ գրկեալ ունի ընդ մէջ իւր պատուականագունեղ բանական զօրութիւն հոգւոյ մերոյ, և ամենայն զգայարանք մարմնոյ մերոյ 'ի գլխոց մինչև 'ի յոտս ցանկայ բնական բնութեան սովորութեան անոտի աշխարհիս, և պատճառք շարժման այս անդամոց մարմնոյ մերոյ, որ եռացուցանէ և ձգտի 'ի միտս մեր գործել չորից խառնուածօք այսինքն մաղցիւ բլղամաւ, արիւնաւ և քամիաւ, սոքայ ամենեքեան հնչեն զօրութիւնս իւրեանց 'ի ծայրագոյն չորից տարերացէ, և որպէս նոքա երբեմն յարուին և արձակին 'ի վերայ միմեանց, հողմաւ մրրկաւ, կայծակիւ և փայլակաւ, անչափապէս անձրևաւ, և կարկտիւ որ երբեմն տացեն 'ի պատճառէ անդամոց իւրոց կազմեցեալ իրաց այսինքն յաշխարհի, շարժ երկրի, գլորումն լերանց, տապալումն